

ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՄԵՄԻԱԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԻԼԻԱԼ

Հ Ո Ղ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ս Ե Կ Տ Ո Ր

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐԻԱ

Ա. Ս. ՌԱՖԱՅԵԼՅԱՆ

ԵԳԻՊՏԱՅՈՐԵՆ

ԱՐՄՖԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1 9 4 3

6331

2531

П. 25

П. 25

В. 25

на 12 коп.

12 листов

МЕТРИЧЕСКАЯ

Длины или линейные

- 1 километр (км) = 1 000 метров (м)
- 1 метр (м) = 10 дм = 100 сантиметров (см)
- 1 дециметр (дм) = 10 сантиметров (см)
- 1 сантиметр (см) = 10 миллиметров (мм)

Площади

- 1 кв. километр (кв. км) = 1 000 000 квадратных метров (кв. м)
- 1 кв. метр (кв. м) = 100 квадратных дециметров = 10 000 квадратных сантиметров
- 1 гектар (га) = 100 ар (а) = 10 000 квадратных метров (кв. м)
- 1 ар (а) = 100 кв. метров (кв. м)

1 литр
1 гект

Меры веса

1 тонна
1 центнер
1 килограмм
1 грамм

ТАБЛИЦА УМНОЖЕНИЯ

✓

ՍՍՈՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

Հ Ո Ղ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ս Ե Կ Տ Ո Ր

ՌԵԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱՊՈԳՈՒԼՅԱՐ ՍԵՐԻԱ

633.15
12-25

Ա. Ս. ՌԱՖԱՅԵԼՅԱՆ

ԱՅՈՒԳԱՄ Է 1981 թ.

Ե Գ Ի Պ Տ Ա Յ Ո Ր Ե Ն

~~2531~~
A $\frac{1}{2725}$




ԱՐՄՖԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1 9 4 3

Սերիա՝ խմբագրությանը
Դիմում. վաստակավոր գործիչ
Ա. Դ. ԱՐԱՐԱՏՅԱՆԻ



Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Եզիպտացորենն իր գրաված տարածութ-
յամբ և հատիկի արտադրանքով համաշ-
խարհային նշանակություն ունի:

Շնորհիվ պարտիայի և կառավարության
մի շարք միջոցառումների՝ ՍՍՌՄ-ում խո-
շորագույն հաջողություններ են ձեռք բեր-
ված եզիպտացորենի ցանքերի տարածու-
թյան ընդլայնման բնագավառում:

Եզիպտացորենի ցանքերի հարաճուն
նշանակությունը ՍՍՌՄ-ում բացատրվում
է նրա մի շարք արժեքավոր հատկություն-
ներով: Թվենք դրանցից մի քանիսը:

1. Եզիպտացորենը կարող է օգտագործ-
վել որպես հացահատիկ:

2. Նա արժեքավոր տեխնիկական բույս
է: Եզիպտացորենի բույսի գրեթե բոլոր մա-
սերն էլ օգտագործվում են արդյունաբե-
րության զանազան ճյուղերում:

Եզիպտացորենի հատիկներից ստացվում է օսլա, շաքար, մաթ, ձավար (կրուպա), ձեթ, օճառ, սպիրտ, գարեջուր, քացախաթթու և այլն:

Նրա կոդրերի միջուկներից պատրաստում են լինոլեում, սոսինձ, խցան:

Եզիպտացորենի ցողուններն ու տերեվներն օգտագործվում են քիմիական արդյունաբերության մեջ՝ թուղթ, ցելուլոզա, մեկուսիչ նյութեր, բուտիլային սպիրտ և այլ նյութեր պատրաստելու համար:

Ընդհանրապես եզիպտացորենի բույսերից պատրաստում են մոտ 150 տարբեր նյութեր:

3. Մեծ է եզիպտացորենի նշանակությունը ցանքաշրջանառության մեջ: Նա լավ նախորդող է հանդիսանում դարնանացան և աշնանացան հացաբույսերի համար: Որպես շաքարահերկ կուլտուրա, նա մաքրում է դաշտը մոլախոտերից և հենց դրանով նպաստում է հաջորդող կուլտուրաների բերքատվության բարձրացմանը:

4. Եզիպտացորենը մեծ նշանակություն

ունի նաև աճող անասնապահության կերային բազան ուժեղացնելու գործում: Եգիպտացորենի հատիկը լավագույն խտացրած կերերից մեկն է: Ամերիկայի Միացյալ Նահանգներում խոզաբուծության կերային բազան բացառապես եգիպտացորենն է: Նրա հատիկներով կերակրում են նաև ձիերին, կովերին, թռչուններին: Եգիպտացորենի բույսը շատ բարձր է գնահատվում որպես սիլոսային կեր: Եգիպտացորենը կանաչ մասսայի հարուստ բերք է տալիս: Նրա ցողունները չորացրած և մանրացրած վիճակում օգտագործվում են որպես անասունների կեր:

5. Եգիպտացորենը բարձր բերքատու բույս է, մանավանդ լավ ագրոտեխնիկայի պայմաններում: ՍՍՌՄ-ում եգիպտացորենի բերքը տատանվում է հեկտարին 25-ից 54 ցենտների սահմաններում: Հայկական ՍՍՌ-ի Նոյեմբերյան շրջանի պետական սորտահոլամասում եգիպտացորենը մի շարք տարիների ընթացքում բարձր բերք է տվել:

վերջինս որոշ տարիներում հասել է մինչև
40 ցենտների մեկ հեկտարից:

Մի շարք կոլխոզներում հեկտարից 100
և ավելի ցենտների հասնող ռեկորդային
բերք է ստացված: Կաբարդինո-Յալկարյան
ԱՍՍՌ-ի կոլխոզներից մեկում 60 հեկտար
հողամասի միջին բերքը կազմում էր 108
ցենտներ մեկ հեկտարից, իսկ Դադստանի
ԱՍՍՌ-ում՝ է՛լ ավելի բարձր՝ 218 ցենտ-
ներ մեկ հեկտարից:

**Եգիպտացորենի (Zea Mays) ալյուսեխակներն
ու սորենքը**

Եգիպտացորենը պատկանում է հացազգիների ընտանիքին: Նրա ցողունն ամուր է, ուղղաձիգ: Բույսի բարձրությունը խիստ տարբեր է, նայած սորտին և աճման պայմաններին: Կողրերը և հատիկները տարբեր ձևեր են ունենում, տարբեր է նաև նրանց մեծությունն ու գույնը:

Ի տարբերություն մյուս հացաբույսերից, եգիպտացորենը միատուն բույս է, այսինքն՝ յուրաքանչյուր բույսի վրա կան ինչպես արական ծաղկաբույլեր (բույսի գագաթին), այնպես և իգական (տերևանութներում):

Եգիպտացորենը խաչաձև փոշոտվող բույս է, բայց հաճախ տեղի է ունենում նաև ինքնափոշոտում, որի հետևանքով սորտն ալյուսեխակում է: Այդ երևույթը կանխելու համար կիրառում են եգիպտացորենի ար-

հետազոտության փուլում, որը մեծ չափով բարձրացնում է բերքատվությունը և բարելավում հատիկի որակը:

Եգիպտացորենի սորտերը շատ բազմազան են: Ըստ գոյություն ունեցող դասակարգման՝ բոլոր ալյատեսակները բաժանվում են 8 խմբի: ՄՍՌՄ-ում ամենից շատ տարածված են հետևյալ երեք խմբերը.

1. Կայծքարային եգիպտացորեն: Մշակվում է հատիկ ստանալու համար, որպես մարդկանց սնունդ և անասունների կեր: Պիտանի է նաև արդյունաբերության համար: Հատիկները փայլուն են, վերևից կլոր, իսկ կողքերից սեղմված: Կողրերն իրարից տարբերվում են զանազան հատկանիշներով՝ ձևով, հատիկների գույնով ու դասավորությունով և այլն: Այս խմբի մեջ կան ավելի վաղահաս սորտեր: Օսլան հատիկներում կազմում է 65,5%, սպիտակուցները՝ 13%, ճարպը՝ 4,80%: Հայկական ՄՍՌ-ում կայծքարային եգիպտացորենի սորտերը շատ տարածված են:

2. Օսլային եգիպտացորեն: Մշակվում է

հատիկ ստանալու համար, որպես մարդկանց
սնունդ և անասնակեր: Մեծ նշանակություն
ունի օսլա-մաթի և սպիրտի արդյունաբե-
րություն համար: Հատիկներն անփայլ են,
կլոր մակերեսով: Այս խմբի մեջ մտնում են
միջին վաղահաս ձևերը: Օսլան հատիկնե-
րում կազմում է $65,3\%$, սպիրտակուցը՝ 12% ,
ճարպը՝ $5,7\%$:

3. Ատամնակերպ եգիպտացորեն: Հատի-
կը օգտագործվում է որպես սնունդ և ան-
ասնակեր՝ ինչպես նաև արդյունաբերական
մշակման համար (սպիրտի): Հատիկը երկա-
րավուն է, սեղմված, մակերեսը բնորոշ ա-
կոսիկ ունի, որի պատճառով էլ հատիկը
նման է ձիու առամի: Այս խմբին պատկա-
նող սորտերը մեծ մասամբ ուշահաս են:
Օսլան հատիկներում, միջին հաշվով, կազ-
մում է $66,2\%$, սպիրտակուցները՝ $11,3\%$,
ճարպերը՝ $4,2\%$:

Հայկական ՍՍՌ-ի Նոյեմբերյանի Պետ.
սորտահողմասի տվյալների համաձայն,
ատամնակերպ եգիպտացորենի խմբին պատ-
կանող «Միննեզոտա 23» սորտը հատիկի

համար մշակելիս պարզվել է, որ ամենավաղահասն է (96 օր) և լավ է օգտագործում ամառվա երկրորդ կեսի տեղումները: Մի շարք տարիների տվյալներով՝ այդ սորտն իր բերքատվությամբ առաջին տեղն է բռնել: Բերքատվության բարձր ցուցանիշներ են տվել նաև «Միննեզոտա 13», «Ստերլինգ», «Լիմինգ», «Բրոցի-Կոնտի», «Կրուգ» սորտերը:

Կայծքարային եզիպտացորենի խմբին պատկանող «Գրուշևսկի» սորտն իր բերքատվությամբ գրեթե մրցում էր «Միննեզոտա 23» սորտի հետ:

Օսլային եզիպտացորենի խմբից Հայաստանի համար մեծ նշանակություն ունի «Այվորի կինգ» վաղահաս սորտը:

Եզիպտացորենի վերաբերմունքը հողա-կլիմայական պայմանների հանդեպ

Վերաբերմունքը ջերմության հանդեպ: Եզիպտացորենը ջերմասեր բույս է: Նա ծլում է 10 — 12° ջերմության դեպքում: Գարնանային ցրտահարություններից հետո

ծիլերը շատ շուտ վերականգնվում են, իսկ աշնանային ցրտահարություններն ավելի կործանարար ազդեցություն են թողնում, քնասելով հատիկը:

Տարբեր սորտերի վեգետացիոն շրջանը մեծ մասամբ տատանվում է 85-ից 120 օրվա միջև, իսկ որոշ ուշահաս սորտերինը տևում է մինչև 200 օր:

Վերաբերմունքը խոնավության հանդեպ: Եգիպտացորենը չորադիմացկուն բույս է: Նա լավ է դիմանում ամառվա առաջին կեսի երաշտներին: Հուլիանական և ծաղկման շրջանում բույսի պահանջը խոնավության հանդեպ մեծանում է. այդ շրջանը համընկնում է ամառվա երկրորդ կեսի առատ անձրևներին, որոնք եգիպտացորենի կողմից լավ օգտագործվում են: Վաղահաս հասկավոր կուլտուրաների համար այդ տեղումներն անօգուտ են անցնում:

Առատ ջրի դեպքում եգիպտացորենը մեծ չափով բարձրացնում է իր բերքատվությունը:

Վերաբերմունքը հողի հանդեպ: Եգիպ-

տացորենը բալականին պահանջկոտ է դեպի հողը: Լավ աճում է մուգ-շագանակագույն, սևահողային, փուխը, կավախառն հողերում, որոնք նպաստում են նրա արմատային սխտեմի հաջող զարգացմանը: Խիստ հյուծված, պնդացած, աղուտային և ճահճացած հողերն անպետք են եգիպտացորենի մշակության համար:

Եգիպտացորենի տեղը ցանառօջանառուրյան մեջ

Եգիպտացորենն այնքան էլ պահանջկոտ չէ դեպի նախորդողները: Նա հաճախ ցանվում է հացահատիկներից հետո, բայց լուրջ հետո ցանվելու դեպքում շատ բարձր բերք է տալիս:

Եգիպտացորենը, որպես շարքահերկ կուլտուրա, լավ նախորդող է գարնանացան հացահատիկների համար: Բավարար խոնավություն ունեցող զոնայում հատիկի համար վաղահաս սորտեր ցանելու դեպքում, նա լավ նախորդող է նաև աշնանացան հացաբույսերի համար: Տաք և խոնավ շրջաններ

բում եզիպտացորենը մշակվում է նաև որ-
պես խոզանացան կուլտուրա՝ կանաչ կերի
ու սիլոսի համար:

Հողի մշակությունը

Հողի մշակությունն սկսվում է աշնա-
նից, նախորդող կուլտուրաների բերքը հա-
վաքելուց անմիջապես հետո. այդ ժամանակ
խոզանը երեսվար են անում: Խոզանավա-
րից հետո պետք է նախախտիլի ունեցող գու-
թանով ցրտահերկ կատարել 25—30 սմ
խորությամբ: Խոր և ժամանակին կատար-
ված հերկը բարելավում է հողի ֆիզիկա-
կան ու քիմիական հատկությունները, իսկ
հողում եղած սննդանյութերը բույսերի
համար դյուրամատչելի է դարձնում:

Պարարացում

Եզիպտացորենի համար լավ պարարտա-
նյութ է գոմաղբը, որը բերքը բարձրաց-
նում է 10—12 ցենտներով մեկ հեկտարին:
Գոմաղբը պետք է հողի մեջ մտցնել աշ-
նանը՝ խոր ցրտահերկից առաջ, հեկտարին

30—40 տոննի հաշվով: Գոմադրը հեշտությամբ կարելի է փոխարինել խառնադրով, որը հողին տրվում է նույն նորմայով:

Եզիպտացորենն զգայուն է նաև հանքային պարարտացման, հատկապես սուպերֆոսֆատի հանդեպ: Սուպերֆոսֆատով հողը պետք է պարարտացնել ցրտահերկից առաջ՝ հեկտարին 4—5 ցենտների հաշվով: Շատ մեծ նշանակություն ունի պարարտանյութը հողում համաչափ ցրելը: Այդ նպատակի համար օգտագործվում են սուկային և կոմբինացված ցանիչներ, իսկ եթե ցանիչներ չկան, այդ դեպքում պարարտանյութը շաղ է տրվում ձեռքով՝ հողամասի երկարությամբ և լայնությամբ: Այդ աշխատանքը պետք է կատարել խաղաղ, քամի չեղած եղանակին:

Հողի նախացանալին մշակությունը

Գարնանը, դաշտ դուրս գալու հենց առաջին հնարավորության դեպքում, հողամասը պետք է երկու հետք փոցխել՝ խոնավությունը պահպանելու նպատակով:

Քանի որ եզիպտացորենն ուշ է ցան-
վում, այդ պատճառով էլ կարելի է հողա-
մասը 2—3 անգամ մշակել կուլտիվատոր-
ների, բազմախոփ գութանների կամ անթև
գութանների միջոցով և միաժամանակ հողը
փոցխել: Նախացանքային լավ մշակու-
թյունը մոլախոտերը ոչնչացնելուց և հողում
խոնավություն պահելուց բացի, ապահովում
է սերմերի լավ ծածկվելը հողով և հեշտաց-
նում է բույսերի հետագա խնամքը:

Սերմերի նախապատրաստումը

Եզիպտացորենի բարձրորակ սերմացու
ստանալու համար՝ աշխատանքը պետք է
սկսել բերքահավաքից դեռ շատ առաջ:
Այդ նպատակով հուրանները (աբական ծաղ-
կաբույլերը) դուրս գալու ժամանակ, բույ-
սերի մեջ ընտրություն է կատարվում, ըստ
որում բոլոր թույլ բույսերի հուրանները
հեռացվում են: Այնուհետև նշում են որոշ
թվով առողջ, ուժեղ, նորմալ զարգացած
բույսեր, որոնք հասունացումից հետո հա-
վաքում են առանձին և, ընտրություն կա-

տարելուց հետո, թողնում են որպէս սերմացու:

Ձմեռը եգիպտացորենի սերմերը պահւում են կողրերով՝ լավ օդափոխվող շենքերում:

Գարնանը, ցանքից առաջ, այդ կողրերը նորից տեսակավորում են—նրանցից ջուկում են ամենալավերը և սերմացուի համար վերցնում են միայն կողրերի միջին մասի հատիկները: Այդպիսի հատիկներն ամենից ավելի միատարր և լեցուն են լինում:

Սերմացուի համար առանձնացված կողրերը պետք է կանոնավոր ձև ունենան: Հատիկները պետք է ունենան միևնույն մեծությունը, ձևը և գույնը, նրանք պետք է խիտ և հավասարաչափ կպած լինեն առանցքին:

Ցանքից առաջ անհրաժեշտ է ստուգել սերմերի ծլունականությունը և ախտահանել՝ մրիկը կանխելու նպատակով: Ցանքը պետք է կատարել նախապէս թրջված սերմերով: Նախքան ցանքը պետք է հողամասը ջրել:

Բույսերի զարգացումն արագացնելու և բերքը բարձրացնելու նպատակով կիրառվում է եզիպտացորենի յարովիզացիա: 100 կիլոգրամ սերմ յարովիզացիայի ենթարկելու համար վերցնում են 30 կիլոգրամ ջուր, որը տրվում է մի քանի անգամ, փոքրիկ բաժիններով: Թրջելուց հետո սերմերը լցնում են հատակին և 10—15 օր պահում 20—30° ջերմության պայմաններում: Յարովիզացիան կատարվում է մթության մեջ, և սերմերի կույտն ամբողջ ժամանակ ծածկված են պահում կոպիտ կտավով, օգափոխությունը կատարում են գիշերները: Եթե ծիլի երևալն ուշանում է, մի քիչ ջուր են ավելացնում, ըստ որում պետք է շատ ըզգույշ լինել, որպեսզի սերմերը չծկեն:

Յանքի ժամանակը

Եզիպտացորենը ջերմասեր բույս է. նա ծլում է բավականաչափ տաքացած հողում: Վաղ ցանքի դեպքում սերմերը փչանում են, նեխում, և դրա հետևանքով նոսր ցանք է ստացվում: Յանքն ուշացնելը նույնպես



2527
A 2725

ցանկալի չէ, որովհետև բացասաբար է ազդում բերքի քանակի վրա: Յանքի համար նորմալ պետք է համարել այն ժամանակը, երբ եղանակն արդեն կայունանում է, և հողը տաքանում է մինչև $10-12^{\circ}$: Դա մոտավորապես լինում է դարնան դաշտային աշխատանքներն սկսելուց $15-20$ օր հետո: Հանձնարարում ենք ցանքի հետևյալ ժամկետները.

Նգիպտացորենի ցանքի ժամկետները

Աղյուսակ 1

Վ ա յ ր ւ	Յանքի ժամանակը
Հարավային Հայաստան	$20/IV-30/IV$
Հյուսիսային Հայաստան	$25/IV-5/V$
Արաբառայան դաշտավայր և նախալեռնային գոտի	$1/V-15/V$

Տարբեր հողա-կլիմայական պայմաններում այս ժամկետները կարող են և պետք է փոփոխվեն:

Յանքի եղանակները

Նգիպտացորենը ցանվում է միայն լայնաշար: Յանքի առավել կատարյալ եղանակ

կը, որը լիովին համապատասխանում է հողի մեխանիկական մշակման պահանջներին, շախմատային ցանքն է: Ցանքի այս ձևի դեպքում ուղիղ շարքեր են ստացվում ոչ միայն դաշտի երկարությամբ, այլև լայնությամբ, որը հնարավորութուն է տալիս միջշարքերը մեխանիկական մշակման ենթարկել երկու ուղղությամբ:

Ցանքի լավագույն ձևերից մեկը բնացանքն է, որը կատարվում է հատուկ բնացան մեքենայով: Ցանքի այս ձևն ապահովում է սերմերի համաչափ բաշխումը թե՛ շարքերում և թե՛ միջշարքերում:

ՍՍՌՄ-ում հզիպտացորենի ցանքը մեծ մասամբ կատարվում է սովորական և բամբակի շարքացաններով:

Կարևորագույն հարց է միջշարքերի լայնության ճիշտ որոշումը: Դա սովորաբար որոշվում է՝ նայած շրջանին, սորտին ու մշակման մեքենաներին, և տատանվում է 60—80 սմ միջև:

Այն հողամասերում, որտեղ նախատեսված է բերքահավաքը կատարել պիկկեր-

ներով, միջշարքերի լայնությունը վերցվում է անպայման 90 սմ:

Մոլախոտերով վարակված և պակաս բերքատու հողամասերում մեծ արդյունք է տալիս խիտ ցանքը: Խիտ ցանք է կատարվում նաև վաղահաս սորտեր աճեցնելու և եղիպտացորենը սիլոսի համար ցանելու դեպքում:

Տարբեր շրջանների համար հանձնարարում ենք սնման հետևյալ մակարդակները՝ ջրովի հողերում:

Սնման մակարդակը

Աղյուսակ 2

Վ ա յ ը ը	Մակարդակը սանտիմետրերով	
	Ուշահաս սորտ	Վաղահաս սորտ
ՀՍՐԱՎԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ		
1. Բերրի հողեր . . .	80×50	75×50
2. Անբերրի հողեր . .	75×45	70×45
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ		
1. Բերրի հողեր . . .	80×50	75×50
2. Անբերրի հողեր . .	75×45	70×40
ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԱՎԱՅՐ ԵՎ ՆԱԽԱԼԵՌՆԱՅԻՆ ԳՈՏԻ		
1. Բերրի հողեր . . .	75×50	70×45
2. Անբերրի հողեր . .	70×45	65×40

Յանքի նորման

Յանքի նորման որոշում են, ելնելով ցանքի եղանակից, հատիկների մեծությունից և այն նպատակից, թե ինչի համար է ցանվում եգիպտացորենը (սիլոս, հատիկ)։

Հատիկի համար ցանելիս, հետագայում ձեռքով նոսրացնելու պայմանով, ցանքի նորման վերցվում է հեկտարին 40—50 կիլոգրամ։ Մեքենայով շախմատային կամ բնացան անելիս, հետագա նոսրացում կատարելու դեպքում, պահանջվում է հեկտարին 30—35 կիլոգրամ։ Սիլոսի համար ցանելու դեպքում մեկ հեկտարին պետք է վերցնել 55—65 կիլոգրամ սերմացու։

Յանքի խորությունը

Ցանքի նորմալ խորությունը համարվում է 6—8 և նույնիսկ 10 սմ։ Խոր ցանքն ապահովում է սերմերը խոնավությամբ և պաշտպանում է ճայակների կտցահարումից։

Ցանքի խորությունը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև տվյալ շրջա-

նի հողային պայմանները: Ծանր հողերում ցանքի խորությունը կարելի է պակասեցնել մինչև 5—6 սմ, իսկ փուխը, թափանցիկ հողերում կարելի է խոր ցանել, բայց ոչ ավելի 10 սմ-ից, որովհետև ավելի խոր ցանքի դեպքում ծիլերը թույլ են լինում, և եգիպտացորենն ուշ է հասունանում:

Ցանքից հետո անհրաժեշտ է հողը տափանել, դա նպաստում է ջրի բարձրացմանը հողի խոր շերտերից դեպի սերմերը: Եգիպտացորենի հատուկ շարքացան մեքենաներն իրենց վրա առանձին տափանող գլաններ ունեն: Հացահատիկային շարքացան մեքենայով կատարված ցանքերը տափանվում են օդակալոր գլաններով:

Ցանքի խնամք

Եգիպտացորենի բարձր բերքն ապահովելու համար անհրաժեշտ է ցանքը ճիշտ և ժամանակին խնամել:

Ծիլերը դուրս գալուց հետո (երբ երևում են 2—3 տերև), հողամասը շարքերի լայնության ուղղությամբ փոցվում է: Այս

գործողությամբ կեղևը ոչնչացնում և մոլախոտերը ճնշում են: Այդ միջոցառումը հետագայում դառի կերպով հեշտացնում է ցանքի մշակությունը:

Եթե հզիպտացորենը սովորական հացահատիկային շարքացաններով են ցանել, ապա անհրաժեշտ է 3—4 տերև դուրս գալու ժամանակ ծիլերի նոսրացում կատարել: Նոսրացումը կատարվում է կուլտիվատորով, շարքերի լայնության ուղղությամբ: Կուլտիվատորը բույսերի մի մասը կտրում է, բույսերի փնջեր թողնելով իր սկավառակների արանքներում: Փնջի երկարությունը վերցնում են 20—30 սմ, հեռավորությունը մեկ փնջից մյուսը՝ 40—50 սմ, համաձայն տվյալ շրջանի համար որոշված սնման մակարդակի:

Փնջավորումից հետո կատարվում է երկրորդ նոսրացումը՝ ձեռքով, որի ժամանակ հեռացվում են ավելորդ, թույլ զարգացած, վտիտ բույսերը: Ուժեղ նոսրացման դեպքում հանձնարարվում է խիտ տեղերից բույսեր հանել և սածիլել նոսր տեղերում,

կամ եղած սերմերով լրացուցիչ ցանք կատարել: Տնտեսության մեջ համապատասխան կուլտիվատորներ չլինելու դեպքում նուրացումը պետք է կատարել ձեռքով:

Նոսրացումը վերջացնելուց հետո կատարվում է միջշարքերի մշակում՝ մոլախոտերը ոչնչացնելու և հողի մակերեսը փրկեցնելու նպատակով: Դրա համար օգտագործվում են տրակտորային և ձիու կուլտիվատորներ, նույնիսկ շարքացաններ՝ հատուկ քաղհանող թաթերով:

Մեքենայացված քաղհանից անմիջապես հետո ձեռնուրագներով քաղհան է կատարվում, միաժամանակ ստուգվում է ցանքի խտությունը, և ավելորդ բույսերն ու մոլախոտերը հեռացվում են: Շարքերում նույնպես ձեռքով են քաղհանում:

Երկրորդ շարքահերկը կատարվում է այն ժամանակ, երբ հողի երեսին կեղև է առաջանում, և մոլախոտեր են դուրս գալիս: Դա լինում է առաջին քաղհանից մոտավորապես 20—22 օր հետո, սրա հետ մեկտեղ շարքերից ձեռքով հեռացնում են մոլախոտերը:

Հետագա մշակությունը կատարվում է մո-
լախոտեր երևալու ժամանակ:

Շախմատային և բնային ցանքի դեպ-
քում նոսրացման կարիք չի լինում:

Կոլխոզ-սովխոզային արտադրության
համար եգիպտացորենի երեք մշակությունը
պարտադիր է: Բերքատվության առաջա-
վորները, ռեկորդային բերք ստանալու հա-
մար, դաշտը մշակում են 5—6 և ավելի ան-
գամ:

Եգիպտացորենի սնուցումը

Եգիպտացորենի աճն սկզբում դանդաղ
է ընթանում, և այդ շրջանում նրա պահանջը
սննդանյութերի հանդեպ աննշան է լինում:
Նրա բուռն աճը և սննդանյութերի մեծ
պահանջն սկսվում է հունիսի երկրորդ կես-
սից, երբ բույսը 20—25 սմ բարձրության
է հասնում, և շարունակվում է մինչև ծաղկ-
ման վերջը: Հենց այդ ժամանակ էլ պետք
է սնուցել: Մնուցումը տրվում է փոքր բա-
ժիններով՝ հեշտ լուծվող միացությունների
ձևով:

Հանքային պարարտանյութերից լավ արդյունք է տալիս ամոնիակային սելիտ-րան, որը հող է մտցվում հեկտարին 0,75—1 ցենտներ ի հաշվով: Մնուցման համար տըր-վում է նաև սուպերֆոսֆատ՝ հեկտարին 1,5—2 ցենտներ, և կալիումական աղ՝ հեկ-տարին 2—2,5 ցենտներ:

Պարարտանյութը հող մտցնելուց առաջ պետք է մաղել և կոշտերը փշրել: Պարար-տանյութը դաշտում համաչափորեն բաշխե-լու համար խորհուրդ է տրվում գործածել լուծված վիճակում (1 մաս պարարտանյու-թին 5—6 մաս ջուր): Հեղուկը դաշտում պետք է շաղ տալ հատուկ մեքենաների՝ բուսասնուցիչների միջոցով: Այդ նպատակի համար օգտագործվում են նաև շարքացան-ներ, ծորակով տակառներ, ցնցուղներ և այլն:

Այժմ Միության մեջ հատուկ մեքենա է կառուցված բարձրացողուն շարքահերկ բույսերի սնուցման համար: Այդ մեքենան պարարտանյութերը հող է մտցնում լուծված վիճակում՝ 8—10 սմ կորուսյամբ: Մնու-

ցումը չոր պարարտանյութերով կատարելու համար հարմարեցվում են հատուկ թաթափոր կուլտիվատորներ, որոնք միաժամանակ փխրեցնում են հողը:

Բացի հանքային նյութերից՝ եգիպտացորենի սնուցման համար տեղական պարարտանյութերից լայնորեն կարելի է կիրառել գոմաղբի հեղուկը, թռչնաղբը և այլն: Գոմաղբի հեղուկը մեկ հեկտարին պետք է վերցնել 5—6 տոնն, լավ է նրան ավելացնել 1—2 ցենտներ սուպերֆոսֆատ: Թռչնաղբը վերցվում է հեկտարին 2—3 ցենտներ, ցանկալի է հեղուկ վիճակում, որի համար պետք է հատուկ մեծ ամանների մեջ 5—7 օր խմորման ենթարկվի, լավ է այն խառնել մոխրի հետ (հեկտարին 2—3 ցենտներ) և հեղուկ վիճակում ջրել:

Եգիպտացորենի ոռոգումը

Զնայած եգիպտացորենը չորադիմացկուն բույս է, նա շատ զգայուն է դեպի ոռոգումը: Երկար տարիների փորձնական տըվյալներով պարզվում է, որ երբ եգիպտա-

ցորենի հուրանները դուրս գալու և հատիկները կազմավորվելու շրջանում ջուր ենք տալիս, բերքը խիստ բարձրանում է: Երկարատե, բարձր ջերմություն լինելու դեպքում եգիպտացորենը կարելի է հաճախակի ջրել՝ 6—7 անգամ, մանավանդ հատիկի կազմավորման շրջանում, որովհետև դրանից հետո ոռոգումը շատ ավելի պակաս արդյունք է տալիս: Ոռոգումը կատարվում է ակոսների մեջ ջուրը բաց թողնելու միջոցով:

Եգիպտացորենի հասունացումը և բերեալավաճ

Եգիպտացորենի բերքահավաքը հատիկի համար՝ կատարվում է նրա լրիվ հասունության շրջանում: Հասունությունը որոշվում է տերևների և կողրերի պատյանների դեղնելով ու չորանալով, այդ ժամանակ հատիկը պնդանում է, փայլ և տվյալ սորտի համար տիպիկ գույն է ստանում:

Բերքահավաքն ուղացնելը լավ չէ, որովհետև եգիպտացորենն ընկնելով աշնան անձ-

ընների տակ, կարող է սնկային հիվանդու-
թյուններով վարակվել, բացի այդ՝ բերքի
չորացումն ու պահպանումը դժվարանում է:

Եզիպտացորենի բերքահավաքը կատար-
վում է տարբեր եղանակներով: Կարելի է
հավաքել միայն կողրերը, դրանք պոկելով
ցողուններից: Այդ կատարվում է կամ հա-
տուկ մեքենաներով — պիկկերներով (կող-
րապոկիչներ) կամ ձեռքով: Պիկկերով հա-
վաքելու համար ամենից հարմարը բարձր,
կանգուն և ամուր ցողուններ ունեցող սոր-
տերն են, որոնց կողրերը կաճ են ցողու-
նին հողի մակերեսից 40 սմ բարձրությու-
նից ոչ ցած: Կողրերը ցած լինելու դեպ-
քում մեծ կորուստ է լինում, և մնացած կող-
րերը հավաքելու համար ձեռքի լրացուցիչ
աշխատանք է պահանջվում:

Խորհուրդ է տրվում ձեռքով բերքահա-
վաք կատարելիս լայնորեն, կիրառել ամե-
րիկյան կարթերը, որոնք աշխատանքը շատ
հեշտացնում և արագացնում են: Դրա հա-
մար պետք է նախ կողրերը մաքրել պա-

տյաններին և հետո միայն պոկել ցողուն-
ներին:

Դաշտը եգիպտացորենին շտապ կերպով
ազատելու համար երբեմն կտրում են ամ-
բողջ բույսերը—այդ կատարվում է համա-
պատասխան հնձող և խոտհար մեքենաների
միջոցով: Կտրված բույսերը, կողբերով միա-
սին, չորացվում են հատուկ փոքրիկ դեղե-
րով: 5—8 օրին հետո, երբ բույսերն ար-
դեն որոշ չափով չորացած են լինում,
սկսում են կողբերը պոկել և մաքրել պա-
տյաններին: Այս աշխատանքը կարելի է
մեքենայացման ենթարկել խեղիկ-Շրեդեր
կոչվող հատուկ մեքենայով, որը, բացի կող-
բերը պոկելուց և մաքրելուց, նաև մանր
կտրատում է ցողուններն ու տերևները:

Եգիպտացորենի չորացումն ու պահպանումը

Սերմացու եգիպտացորենի պահպանումը
հատուկ նախազգուշություն է պահանջում:
Կողբերի խոնավությունը 13 — 14⁰/₁₀₀-ից
չպետք է անցնի:

Զորացնելու համար պետք է հարմարեցնել լավ օդափոխվող հատուկ շենքեր: Ցածր ջերմաստիճանը բացասաբար է ազդում եզիպտացորենի սաղմի վրա և գցում է նրա ծլուկնակությունը: Զորացումն արագացնելու համար կարելի է եզիպտացորենը կապուկնիրով կախել, դա նպաստում է լավ օդափոխմանը:

Ապրանքային և կերային նպատակների համար առանձնացված եզիպտացորենը նույնպես մշտական հսկողություն և լավ օդափոխություն է պահանջում: Նա կարող է պահվել ինչպես կողրերով, այնպես և կախված վիճակում:

Եզիպտացորենի վնասատուներն ու հիվանդությունները

Եզիպտացորենի գլխավոր վնասատուներն ագռավներն են, որոնք ուտում են մատղաշ ծիլերը, դրանք կտցահարելով հողի միջից: Պայքարի միակ միջոցը եզիպտացորենը պահպանելն է, մինչև որ բույսերը բավականին ամրանան:

Թեթև հողերում մեծ ֆլաա է հասցնում իշախառանչը: Պայքարելու համար պետք է մկնդեղով թունավորված, ջարդված եգիպտացորենի հատիկներ մտցնել հողի մեջ՝ նախքան ցանքը:

Դաշտային մկների դեմ նույնպես կարելի է պայքարել մկնդեղով:

Բուվաթիթեռը և մարգագետնային քիթոնիկը նույնպես ֆլաա են հասցնում եգիպտացորենին: Նրանց դեմ պայքարելու համար պետք է ոչնչացնել մոլախոտերը, որոնց վրա նրանք ձու են դնում, կամ սրսկել մոլախոտերը թուլներով (12 լիտր ջրին՝ 15 գրամ փարիզյան կանաչ և 25 գրամ կիր):

Հիվանդություններից եգիպտացորենին ամենից շատ ֆլաա է հասցնում մրիկը: Նա վարակում է բույսի զանազան մասերը—ցողունները, տերևները, կողրերը: Պայքարի միջոցներն են՝ դաշտից հիվանդ բույսերը հեռացնելը, վաղ ցանքը, ցանքաշրջանառությունը:

Փուգաբիծը վարակում է ցողուններն

ու կողրերը՝ երիտասարդ հասակում, որի հետևանքով հատիկները ճաքճքում են: Պայքարի միջոցներն են՝ կայուն սորտեր ստանալը, ցանքաշրջանառությունը և կողրերի խնամքով ընտրությունը:

Սպիտակ բորբոսը վարակում է գլխավորապես հատիկները, որոնք դրա հետևանքով կորցնում են իրենց ծլունակությունը: Պայքարն է՝ կայուն սորտեր ստանալը և ցանքաշրջանառությունը:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱ.-ՊՈՊՈՒԼՅԱՐ ՍԵՐԻԱ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Ս. Խ ա չ ա տ ր յ ա ն — Բանջարանոցային
բույսերի աճեցումը երևանի պայման-
ներում 10 ռ.
2. Տ. Ս. Տ Ե Բ - Ս ա հ ա լ յ ա ն — Կարտոֆիլի
կուլտուրան Արարատյան դաշտավայրում 6 ռ.
3. Ա. Ս. Ռ ա ֆ ա յ ե լ յ ա ն — Կորեկ . . 1 ռ. 50 կ.
4. Հ. Ս. Բ ա դ ա լ յ ա ն — Ինչպես որոշել քա-
նի օրական է Լուսինը 5 ռ. 50 կ.
5. Պ. Դ. Յ ա ր ո շ ե ն կ ո — Մասուրը որպես
վիտամինի հարուստ աղբյուր 2 ռ.
6. Գ. Դ. Յ ա ր ո շ ե ն կ ո — Զեմ և պաստեղ՝
անտառային հոնից, Յուդալի մածուկ հա-
ճաբենու պտուղներից 2 ռ.
7. Ա. Գ. Ա ր ա ր ա տ յ ա ն — Անտառայգի-
ներ 2 ռ. 50 կ.
8. Ա. Ս. Ռ ա ֆ ա յ ե լ յ ա ն — Եղիպտացորեն 3 ռ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

1. Ա. Ս. Ռ ա ֆ ա յ ե լ յ ա ն — Ընդեղեն բույսերի
կուլտուրան երևանի հողային պայմաններում:

2. Ս. Ս. Ր ի խ տ ե ը — Հայաստանի թունավոր օձերը
3. Հ. Հ. Ս ե պ ե տ չ յ ա ն — Հայաստանի ինքնաբույս
վալերիանը և նրա մշակությունը:
4. Պ. Ս. Պ ո ղ ո ս ո վ — Երևանի հողերը:
5. Վ. Գ. Ա ղ ա բ ա բ յ ա ն — Երևանի հողերի սլա-
րարտացումը:

Վերոհիշյալ հրատարակությունները ձեռք բերե-
լու համար դիմել Հայպետհրատի գրախանութներին:



Армянский Филиал Академии Наук СССР
Сектор почвоведения

Естественно-научная популярная серия

А. С. РАФАЕЛЯН

КУКУРУЗА

(На армянском яз.)

Издание Армфан. Ереван, 1943 г.

ՎՋ 02887, պատկեր 595, տիրաժ 1000.

Ստորագրված է տպելու 17 օգոստոսի 1943 թ.

ՆԳԺԿ Վարչարարության տպարան, Երևան.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0037208

185

ԳԻՆԸ 3 ՌՈՒԲ.

1
2725